ՄԽԻԹԱՐՈՒԹՅԱՆ ՈՐԴԻ

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Այսօր մենք կանդրադառնանք Նոր Կտակարանի մի մարդու, որը նամակներ չի գրել, կամ հրաշքներ չի գործել, որոնք Սուրբ Գիրքն արձանագրում է: Բայց նրա ծառայությունն այնքան զորավոր էր, որ ձևավորեց աշխարհի ամենամեծ միսիոների (Պողոս Առաքյալի) կյանքը:

*Նրա անունը **Բառնաբաս** էր, և առաքյալները նրան անվանեցին «Մխիթարության որդի»:*

Մխիթարությունը կարող է փոքր բան թվալ, բայց այն Աստծո արքայության մեջ ամենահզոր ծառայություններից մեկն է: Բառնաբասը ցույց է տալիս, որ Աստված մխիթարողներին օգտագործում է մարդկանց փոխելու, եկեղեցիները զորացնելու և Իր առաքելությունը առաջ տանելու համար:

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ԳՈՐԾՔ. 4.36–37

*36 Եվ Հովսեփը, որ առաքյալների կողմից Բառնաբաս կոչվեց (որ «**<u>Մխիթարության</u>** huios որդի» է թարգմանվում), ծնունդով կիպրացի մի ղևտացի էր: 37 Նա մի ագարակ ուներ, որը վաճառեց և գումարը առաքյալների տրամադրության տակ դրեց:*

paraklēsis – հորդորանք, խրատ, խրախուսանք

*Բայց **Մխիթարիչը՝ (paraklētos)** Սուրբ Հոգին, որին Հայրն ուղարկելու է իմ անունով... (Հով. 14.26):*

I. ՄԽԻԹԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՅՆ ԽՈՍՔ ՉԷ. ԱՅՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ Է

*Գործք Առաքելոց 9.26-27 – 26 Երբ Սողոսը (Պողոսը) եկավ Երուսաղեմ, ջանք էր անում աշակերտներին հարել, սակայն բոլորը նրանից վախենում էին ու չէին հավատում, որ իսկապես աշակերտ է: 27 Բայց **Բառնաբասը (son of rest)** նրան տարավ առաքյալների մոտ ու պատմեց, թե ինչպե՞ս է նա ճանապարհին Տիրոջը տեսել ու նրա հետ խոսել և թե ինչպե՞ս է Դամասկոսում համարձակ քարոզել Հիսուսի անունով:*

- ***Մխիթարությունը այստեղ միայն խոսք չէր, այլ գործողություն. նա կանգնեց մերժվածի կողքին և կամուրջ դարձավ նրա ու եկեղեցու միջև: Այս քայլից հետո Պողոսը դարձավ եկեղեցու մաս, իսկ հետո՝ պատմության ամենամեծ միսիոներից մեկը:***

4 մխիթարությամբ լիքն եմ. առավել ուրախ եմ մեր ամեն նեղության մեջ... 5 Որովհետեւ երբոր հասանք Մակեդոնիա, մեր մարմինը ոչինչ հանգիստ չունեցավ, այլ ամեն բանի մէջ նեղվում էինք. դրսից կռիւներ՝ ներսիցն ահ ու վախ: 6 Բայց խոնարհներին (downcast, discouraged ընկճված, հուսահատված) մխիթարող Աստուածը մխիթարեց մեզ Տիտոսի գալով. (Բ Կոր. 7.4-6):

- ***Ինչպես Բառնաբասը Պողոսի կյանքում, այնպես էլ մենք կարող ենք դառնալ մեկի կյանքի հատուկ շրջադարձային կետը: Դուք ունեք Բառնաբաս ձեր կյանքում: Կամ կարո՞ղ ես լինել Բառնաբասը ուրիշի կյանքում:***

II. ՄԽԻԹԱՐՈՂԸ՝ ԱՄԵՆԱԼԱՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

Երբ Անտիոքում արթնություն եղավ, առաքյալները ուղարկեցին Բառնաբասին՝ նոր հավատացյալներին զորացնելու: Նա չփորձեց վերահսկել նրանց, այլ ուրախացավ ու զորացրեց: Հետո գնաց Տարսոն՝ Պողոսին գտնելու և բերեց, որ միասին ուսուցանեն:

Գործք Առաքելոց 11 – 22 Այս լուրը հասավ Երուսաղեմի եկեղեցու ականջին: Եվ ուղարկեցին Բառնաբասին, որ գնա մինչև Անտիոք: 23 Երբ նա եկավ ու տեսավ Աստծու շնորհը, ուրախացավ և բոլորին հորդորում էր, որ հոժար սրտով Տիրոջ հետ մնան: 24 Քանի որ նա բարի, Սուրբ Հոգով ու հավատով լցված մարդ էր, բազում ժողովուրդ միացավ Տիրոջը հավատացողներին:

- ***Մխիթարությունը (παράκλησις) հավատացյալի անբաժանելի բնավորությունն է՝ ուրախ, հորդորող, բարի, լի Սուրբ Հոգով և հավատով:***

  Քաղեբն ու Հեսուն իսկապես վառ օրինակներ են մխիթարող (παράκλησις) մարդկանց... Երբ մյուս 10 լրտեսները վախ սերմանեցին, Հեսուն և Քաղեբը հավատք խոսեցին:

  Թվ. 14.7-9 - Այն երկիրը, որի միջովը անցանք նորան լրտեսելու համար, շատ շատ բարի... երկիր է: ...կաթ ու մեղր բղխող երկիր է: ...եւ այն երկրի ժողովրդիցը մի վախենաք:

- ***Սա հենց մխիթարող (παράκλησις) սիրտն է՝ ուրիշներին քաջալերել առաջ շարժվել:***

Հիմա իմ մարտահրավերը քեզ հետևյալն է. կարո՞ղ ես փորձել «paraklēsis» լինել այսօր քո տանը:

III. ՄԽԻԹԱՐՈՂԸ՝ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ Է ԸՆԿԱԾԻՆ

*Գործք Առաքելոց 15 – 36 Սակայն մի քանի օր հետո **Պողոսը** Բառնաբասին ասաց. Արի՛ վերադառնանք ու մեր եղբայրներին այցելենք բոլոր այն քաղաքներում, որոնց մեջ Տիրոջ խոսքը քարոզեցինք, և տեսնենք, թե ինչպե՞ս են նրանք ապրում: 37 **Բառնաբասը** ցանկանում էր **Մարկոս** կոչված Հովհաննեսին էլ վերցնել: 38 Բայց Պողոսը մտածում էր, որ Պամփյուլիայում իրենցից բաժանվածին և իրենց հետ գործի համար չեկածին չպետք է վերցնեն իրենց հետ: 39 Եվ նրանց միջև այնպիսի գժտություն եղավ, որ իրարից բաժանվեցին. Բառնաբասը, Մարկոսին վերցնելով, նավարկեց Կիպրոս:*

- ***Պողոսը և Բառնաբասը վիճեցին Հովհաննես Մարկոսի հարցի շուրջ.***

  Բայց տարիներ անց Պողոսն ինքն էր գրում. «Մարկոսին բեր քեզ հետ, որովհետև նա օգտակար է ինձ ծառայության մեջ» (Բ Տիմոթեոս 4.11):

- ***Մխիթարողները չեն հրաժարվում մարդկանցից: Նրանք կանգնում են կոտրվածների կողքին՝ հավատալով, որ Աստված դեռ գործ ունի նրանց հետ:***

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ